

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2011թ. նոյեմբերի 7-11ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրական ծառայության բիզնեսի զարգացման բաժնի գլխավոր խորհրդատուներ Մարտին Լունդոն և Ագնես Տասսին և Լատվիայի վիճակագրական ծառայության տեղեկատվական տնտեսության բաժնի պետ Գեդիմինաս Սամուլիսը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի շրջանակում «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» բաղադրիչի ներքո,
- ✓ 2011թ. նոյեմբերի 15-18ը ՀՀ ԱՎԾ-ում էին Ֆրանսիայի ժողովրդագրական հետազոտությունների ինստիտուտի փորձագետներ Ժակ Վալանը և Ժերալդին Դյուբեյը, Վրաստանի բնակչության հետազոտությունների կենտրոնի տնօրեն Իրինա Բադուրաշվիլին և կենտրոնի տնօրեն Շորենա Ցիկլաուրին՝ Ֆրանսիայի ժողովրդագրական հետազոտությունների ինստիտուտի «Մահացությունը և դրա պատճառները Կովկասյան երկրներում» ծրագրի շրջանակում խորհրդատվություն ցուցաբերելու և «Ժողովրդագրական հիմնախնդիրները Կովկասում» խորագրով սեմինար անցկացնելու նպատակով,
- ✓ 2011թ. նոյեմբերի 21-25ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրական ծառայության գյուղատնտեսության ԳՀՀ ենթաբաժնի պետ Քարստեն Լարսենը և գյուղատնտեսության վիճակագրության ենթաբաժնի պետ Մոնա Լարսենը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի շրջանակում «Գյուղատնտեսության համատարած հաշվառում» բաղադրիչի ներքո,
- ✓ 2011թ. դեկտեմբերի 5-9ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրական ծառայության տվյալների հավաքագրման և մեթոդաբանության գծով ավագ խորհրդատու Աշու Քոնրադը և Լատվիայի վիճակագրության բաժնի պետի տեղակալ Էլինա Մարկայնը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի շրջանակում «Բիզնես վիճակագրություն» բաղադրիչի ներքո,

- ✓ 2011թ. դեկտեմբերի 19-21ը ՀՀ ԱՎԾ-ում էին Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության արտասահմանյան երկրների վիճակագրության և միջազգային համագործակցության վարչության պետ Ի. Խորիտոնովը, գների և ֆինանսների վիճակագրության վարչության պետի տեղակալ Ն. Պոտյավինան և գների և ֆինանսների վիճակագրության վարչության կազմակերպությունների ֆինանսների վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ե. Իսահակյանը: